



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

ԵՎՐՈՊԱՅԻ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Պետությունները միջազգային հարաբերություններում իրենց ազդեցությունը տարածելու համար կիրառում են տարբեր ռազմավարություններ՝ համադրելով տնտեսական, ռազմական և նորմատիվ տեխնոլոգիաները: Եվրոպան, առավել կոնկրետ՝ Եվրոպական միությունը, համարվում է նորմատիվ ուժ (քաղաքակրթական ուժ), քանի որ իր առջև նպատակ է դրել ազդեցություն գործել պետությունների վրա նորմերի տարածման միջոցով: Եվրոպական (ԵՄ) հիմնաքարային նորմերն ամրագրված են «acquis communautaire»-ում և «acquis politique»-ում, դրանք են՝ խաղաղությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը [1]: ԵՄ-ն հիշյալ նորմերի տարածման համար նախապատվությունը տալիս է «փափուկ ուժի» ռազմավարությանը, որը համապատասխանում է թե՛ որդեգրած արժեքային համակարգին, թե՛ կիրառվում է առավելապես ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականության շրջանակում: Ըստ Ժոզեֆ Նայի՝ «փափուկ ուժ»-ն այն քաղաքական ռազմավարությունն է, որն ի տարբերություն «կոշտ ուժի», ցանկալի նպատակներին հասնելու միջոց կիրառում է արժեքների տարածման և համակրական կապերի ստեղծան մեթոդաբանությունը [2]: «Փափուկ ուժը» փաստացի պետության իմիջի ձևավորմանն ուղղած ռազմավարություն է, որը հետագայում պետք է կապիտալիզացվի արտաքին քաղաքականության ոլորտում: «Փափուկ ուժի» ռազմավարության տեխնոլոգիաներն առավելապես ուղղված են այլ պետությունների հասարակությունների սոցիալականացմանը՝ հետագայում միջազգային հարաբերություններում դիրքերը ամրագրելու համար:

«Փափուկ ուժն» ապահովում է «եվրոպականացման» իրագործումը, այն է՝ Եվրոպայի սահմաններից դուրս մշակութային արժեքների, սոցիալական նորմերի, ինստիտուցիոնալ կազմակերպման ձևերի տարածումը: «Եվրոպականացման» նպատակն է ընդլայնել և խորացնել ազդեցության սահմանները, ինչպես նաև այլ պետություններում մեծացնել Եվրոպայի համակիրների թվաքանակը: Եվրոպականացումն ավելի լայն հասկացություն է՝ համեմատած եվրոպական ինտեգրման հետ. այն կենտրոնանում է ոչ թե ԵՄ ազդեցության տարածքի պետությունների միայն իշխող էլիտայի վրա, այլ փորձում է ազդել նաև հասարակության վրա [3]: Ուստի, եվրոպականացումն իրագործելու մեխանիզմներից մեկը սոցիալականացումն է, այսինքն՝ հասարակության մեջ եվրոպական արժեհամակարգի տարածումը: Լուկասը «փափուկ ուժի» ռազմավարությանը վերագրում է ուժը կիրառող սուբյեկտի կողմից իրականացվող գործողությունների լեգիտիմացումը: Այն հնարավորություն է

ստեղծում, որ օբյեկտն ընդունի սուբյեկտի գաղափարախոսությունը [4]: ԵՄ-ն այժմ իրավասություն ունի հանդես գալու որպես մեկ միասնական դերակատար՝ միջազգային հարաբերություններում իր արտաքին քաղաքականությունն իրագործելով Եվրոպական հարևանության քաղաքականության միջոցով: Այն Արևելյան քաղաքականության երկրների և Միջերկրական համագործակցության ծրագրեր ունի, որոնց միջոցով իր ազդեցությունն իրագործում է ինստիտուցիոնալացված:

ԵՄ-ն մի շարք գործիքներ ունի արտաքին քաղաքականությունում «փափուկ ուժի» կիրառման համար, օրինակ՝ տնտեսական գրավչություն, ներդրումներ ԵՄ-ին չանդամակցող պետություններին, որոնք անդամակցում են ԵՄ արտաքին քաղաքականության որևէ ծրագրի:

ԵՄ-ի «փափուկ ուժի» գործարկման մեթոդներից մեկը կրթության, հատկապես՝ բարձրագույն կրթության ոլորտում իրագործվող քաղաքականությունն է: Կրթության միջոցով արժեքներ տարածելու ռազմավարությունը նախկինում ակտիվորեն կիրառել է ԽՍՀՄ-ն իր քաղաքացիների մոտ նոր՝ կոմունիստական գաղափարախոսությունը տարածելու համար: Այն կիրառում է նաև ԱՄՆ-ն՝ իմիջի պահպանման նպատակով [5]:

Համաշխարհայնացման դարաշրջանում հետարդյունաբերական հասարակությունների տնտեսությունները միտում ունեն վերափոխության՝ դառնալով գիտելիքահեն տնտեսության, ուստի, կրթությունը կարևոր է պետության մարդկային կապիտալի հարստացման համար: Բացի այդ, հենց բարձրագույն կրթության համակարգում են անհատները մասնագիտական կոմպետենցիաներ ստանում: Հաշվի առնելով աշխատաշուկայում ի հայտ եկած նոր կոմպետենցիաների պահանջարկը (soft skills՝ միջմշակութային, թիմային, հաղորդակցական կոմպետենցիաներ)՝ կրթության միջազգայնացումը դարձավ ժամանակի հրամայականը. բուհերն այսուհետ փորձում են միջազգայնացնել իրենց կրթական ծրագրերը և՛ ներգնա, և՛ արտագնա միջոցների շնորհիվ: Բացի տնտեսական առաջընթացի գլխավոր գրավական լինելուց՝ կրթությունը կարևորվում է նաև ոչ նյութական արժեքների ստեղծման և տարածման, այն է՝ պետականաշինության համար [6]: Կրթությունը միաժամանակ միջազգային հարաբերություններում պետության վարկանիշի բարձրացման և արժեքային համակարգի «արտահանման» միջոց է: Կրթությունն անհատին գիտելիքով, կարողություններով և հմտություններով օժտելու համակարգ է, որը կապիտալիզացվում է անհատի կյանքի ընթացքում: Սակայն կրթությունը նաև գործընթաց է, որում անցյալն ինկորպորացվում է ներկայում՝ օգնելով կառուցել ապագան: Բացի այդ, անհատին է փոխանցում հասարակության կուտակած գիտելիքները [7]:

Կրթությունը՝ որպես «փափուկ ուժ», իրագործվում է երեք մեխանիզմներով՝ արժեքների տարածման, ռեսուրսների տարածման և քաղաքականության որոշ նպատակներին հասնելու միջոց: Որպես քաղաքական նպատակների իրագործման մեխանիզմ՝ բարձրագույն կրթությունը հնարավորություն է տալիս հյուր ուսանողների

միջոցով հետագայում ազդել նրանց հայրենիքի պետական քաղաքականության վրա [8]:

ԵՄ-ի «փափուկ ուժի» քաղաքականության կիրառման սկիզբը, կրթության, մասնավորապես՝ բարձրագույն կրթության ոլորտում կարելի է համարել 1988 թ. ընդունված և հետագայում կիրառված Համալսարանների մեծ խարտիան (Magna Charta Universitatum), որը ստորագրել էին 388 ռեկտորներ: Այս փաստաթուղթը հիմնաքարային է, քանի որ արտահայտում է ԵՄ-ի պատրաստակամությունը՝ բարձրագույն կրթության բնագավառում որդեգրելու միասնական մոտեցում, որտեղ համալսարանները կկարևորվում իբրև մշակույթը տարածող և համաշխարհային տնտեսության մարտահրավերներին արագ արձագանքող կարևոր ինստիտուտներ: Դրան հաջորդած Սորբոնի և Բոլոնիայի հռչակագրերն առավել կոնկրետացնում են Եվրոպայի (Եվրոպայի խորհրդի) նպատակը՝ կրթության վրա ունեցած ազդեցությունը դարձնելով առավել ինստիտուցիոնալացված՝ հստակ ռազմավարություն և ինստիտուտների գործընթացների իրականացման համար: Բոլոնիայի գործընթացի առաջնային նպատակը Եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքի ստեղծումն է (ԵԲԿՏ)՝ ուսանողներին, շրջանավարտներին և բարձրագույն կրթության աշխատողներին անարգել շարժունության հնարավորություն տալով բարձրորակ ու մատչելի կրթություն ստանալ ԵԲԿՏ-ին ինտեգրված երկրների բուհերում: Եվրոպական բարձրագույն կրթությունը Եվրոպայի սահմաններից անդին գրավիչ դարձնելու համար Եվրոպայի ներսում պետությունների կրթական համակարգերի համադրելիության անհրաժեշտություն կար: Այդ խնդիրը լուծելու համար ներդրվեց կրեդիտային համակարգը, եռաստիճան կրթությունը, փոխանակման ծրագրերի և կրթաթոշակների հնարավորությունը: Ուստի, Բոլոնիայի գործընթացը, որն այժմ 49 անդամ պետություն ունի, նպաստում է ոչ միայն Եվրոպական կրթության ձևաչափի տարածմանը, այլև միջմշակութային հաղորդակցման հարթակ է, որը հնարավորություն է ստեղծում Եվրոպական արժեհամակարգի տարածման համար: Սակայն կրթության՝ որպես «փափուկ ուժի» օգտագործման հաջողումը կախված է այն համատեքստից, որտեղ այն կիրառվում է, այսինքն՝ ինչքանով է արժեքներին ասիմիլացվելը նպաստելու իրենց (օբյեկտի) կյանքի որակի բարձրացմանը [9]:

ՏՀԶԿ հետազոտությունների տվյալներով՝ կրթության արտահանման շուկայում առաջատար է եղել ԱՄՆ-ն, որին հաջորդել է Մեծ Բրիտանիան: Սակայն Բոլոնիայի գործընթացի և փոխանակային ծրագրերի դյուրացումով ԱՄՆ-ի և Եվրոպայի ասիացի ուսանողների թվաքանակը հավասարեվեց [10]:

2010 թվականին Լիսաբոնում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպմանն ընդունված օրակարգն ամրագրում է, որ Եվրոպան պետք է ձգտի դառնալու աշխարհի ամենաարդյունավետ գիտելիքահեն տնտեսությունը [11]: ԵՄ հանձնաժողովը ԵՄ-ի ապագա զարգացումը կապում է Եվրոպական արժեքներն ընկալող երիտասարդների հետ [12]: Նշվում է, որ կրթական ծրագրերը Եվրոպական միջավայրում նպաստում են

երիտասարդների սոցիալականացմանը, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ Եվրոպական ինտեգրացիոն քաղաքականության հաջողմանը:

«Փափուկ ուժի» կիրառման համար հարկավոր են միջազգայնացման ծրագրեր, որոնք ուսանողների, դասախոսների և շրջանավարտների շարժունության հնարավորություններ կստեղծեն: Փոխանակման ծրագրերից է Էրասմուսը (Էրասմուս+, Էրասմուս Մունդուս), որն իրականացրել և ֆինանսավորել է ԵՄ Հանձնաժողովը դեռևս 1987 թվականից: Այն ԵՄ-ի շարունակական կրթության քաղաքականության բաղադրիչն է: Էրասմուսն առաջնորդվում է «Ուսանողներին բերել Եվրոպա, Եվրոպան բերել բոլոր ուսանողներին» կարգախոսով: Չնայած այն հանգամանքին, որ Բոլոնիայի գործընթացը Եվրոպական Միության ծրագիր չէ, այնուամենայնիվ, Էրասմուսի ծրագրերը ԵԲԿՏ-ում շարժունության հիմնական ծրագրերն են և ֆինանսավորվում են ԵՄ աղբյուրներից: Բացի շարժունության ծրագրերից՝ ԵՄ-ն ֆինանսավորում է նաև պետությունների կրթական բարեփոխումների համար իրականացվող ծրագրերը (օրինակ՝ TEMPUS): Էրասմուս ծրագրին ԵՄ-ն 2007-2013 թթ. համար հատկացրել է 3.1 միլիարդ, իսկ 2014-2020 թթ.՝ նախատեսել 16.174 միլիարդ եվրո [13]: Ծրագրի մեկնարկից ի վեր շարժունության ծրագրերին ՊԴ կազմից մասնակցել են շուրջ 3.3 միլիոն ուսանողներ և 470.000 մարդ: Կապ է հաստատվել ԵՄ-ից դուրս գտնվող 1423 բուհի հետ [14]: Բոլոնիայի գործընթացի նպատակներից է մինչև 2020 թվականն ապահովել ԵԲԿՏ-ի բուհերի բոլոր շրջանավարտների նվազագույնը 20 %-ի մասնակցությունը շարժության որևէ ծրագրի:

Էրասմուսը շարժունություն է ապահովում ամբողջ ԵԲԿՏ-ում, այսինքն՝ և՛ ԵՄ պետությունների միջև, և՛ դրանցից դուրս: ԵՄ-ը ԵՄ քաղաքացիների մեջ միասնական Եվրոպայի գաղափարն ու Եվրոպական ինքնություն սերմանելու խնդիր ունի: Հետազոտությունները փաստում են, որ փոխանակման ծրագրերը երիտասարդների մոտ ձևավորում են «Եվրոպական գիտակցությունը»՝ օգնելով զարգացնել միջմշակութային կոմպետենցիաները: Ըստ էմպիրիկ հետազոտությունների՝ ոչ ԵՄ քաղաքացիները շարժունության ծրագրից հետո իրենց ասոցացնում են Եվրոպայի հետ: Տաբեր մշակույթների հետ հարաբերվելու արդյունքում ձևավորվում է, այսպես կոչված, «մենք զգում ենք» (we-feeling) ֆենոմենը: Շարժունության մասնակցած ուսանողների մոտ զարգանում են հետևյալ կոմպետենցիաները՝ հանդուրժողականություն, օտար լեզվով շփվելու կարողություն, հաղորդակցության հմտություններ: Բացի այդ, շարժունությունը կարող է ազդել նաև նրանց զբաղունակության վրա [15]: Ուսումնասիրություններ են կատարվել ԵՄ քաղաքացի ուսանողների և Թուրքիայի ուսանողների շրջանում՝ հասկանալու, թե նրանց մշակութային պատկերացումները որքանով են փոխվել «Էրասմուս+»-ի շարժունությանը մասնակցելուց հետո: Թուրք ուսանողների 88 %-ը փոխել էր Եվրոպայի մասին պատկերացումը, իսկ ԵՄ ուսանողների միայն 49.4 %-ն էր փաստել, թե փոխել է պատկերացումները ԵՄ այլ պետությունների մասին: Թուրք ուսանողների 76 %-ը պատասխանել էր, թե հրաժարվել է իր նախապաշարմունքներից, մինչդեռ ԵՄ ուսանողների միայն 54.5 %-

ն էր այդպես պատասխանել [16]: Թվերի միջև տարբերությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ եվրոպացի ուսանողները, բացի «Էրասմուս»-ի շարժունության ծրագրերից, ավելի լայն հնարավորություններ ունեն այլ մշակույթներին ծանոթանալու համար:

ԵՄ-ի կրթական ծրագրերն իրականացվում են թե՛ ԵՄ-ի ներսում, թե՛ Հարևանության քաղաքականության շրջանակներում ԵՄ-ի սահմաններից դուրս՝ չանտեսելով նաև այլ պետությունները: Մասնավորապես՝ Ասիայում ԵՄ-ի իմիջի ձևավորման համար ԵՄ Հանձնաժողովը 1994 թվականին ձևավորել էր «Դեպի նոր Ասիա ռազմավարությունը», որով նախատեսում էր բարձրագույն կրթության ոլորտում ուժեղացնել ԵՄ-Ասիա համագործակցությունը [17]:

ԵՄ-ն իր արժեքների և եվրոպական մշակույթի տարածման համար օգտագործում է ոչ միայն ֆորմալ, այլև ոչ ֆորմալ կրթությունը: 2014-2020 թթ. «Էրասմուս» ծրագրերի համար նախատեսված բյուջեի 10 %-ն ուղղվելու են երիտասարդության ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանը: ԵՄ-ն ոչ ֆորմալ կրթությունն իրականացնում է «Երիտասարդությունը գործողության մեջ» ծրագրով (Youth in action). վերջինս էլ իր հերթին է ֆինանսավորում կարճաժամկետ թրեյնինգային կրթական ծրագրեր [18]:

«Փափուկ ուժ»-ի ռազմավարության կարևորագույն մեխանիզմներից է նաև կրթությունը, որը ոչ միայն գիտելիքի ստացման, այլև սոցիալականացման կարևոր համակարգ է: ԵՄ-ն կրթությունն օգտագործում է և՛ ԵՄ տարածքում իր քաղաքացիների եվրոպականացման, և՛ ԵՄ սահմաններից անդին եվրոպական արժեհամակարգի տարածման համար: Հիշյալ նպատակն իրագործելու համար ԵՄ-ն օգտվում է Բոլոնիայի գործընթացով ստեղծված Եվրոպական բարձրագույն կրթության տարածքից՝ ֆինանսավորելով ուսանողների, դասախոսների և աշխատակիցների ուսումնառության վերապատրաստումը: Այդպիսով ԵՄ-ն զարգացնում է նրանց մասնագիտական կոմպետենցիաները և դարձնում ավելի մրցունակ: Հետազոտությունից կարելի է եզրակացնել, որ «Էրասմուս»-ի շարժունության ծրագրերը նպաստում են մասնակցի ակադեմիական զարգացմանը, մեծ ազդեցություն են թողնում նրա արժեհամակարգի փոփոխության, հաղորդակցման, լեզվական և միջմշակութային կոմպետենցիաների ձևավորման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Manners I.**, Normative Power of The EU, the International Role of the EU, Wisconsin, USA, 2001, p. 4.
- [2] **Nye J. Jr.**, Soft Power, Washington post. Newsweek Interactive, LLC, 1990, p. 158.
- [3] **Bulmer Simon J., Radaelli Claudio M.**, The Europeanisation of National Policy? p. 3, Queen's Papers on Europeanisation, No 1/2004, p. 12.
- [4] **Lukes S.**, Power and the Battle for Hearts and Minds, Millennium, 33(3), 2005, p. 482.

- [5] **Tomusk, V.**, 2006a, Pizza Bolognese à la Russe: The Promise and Peril of the Bologna Process in Russia. In: Tomusk, V. ed., 2006, Creating the European Area of Higher Education: Voices from The Periphery. Springer. Ch. 11, pp. 227-49.
- [6] **Inglehart R., Welzel C. H.**, Modernization, Cultural Change and Democracy: The Human Development Sequence, Cambridge: Cambridge University Press. 2005.
- [7] **N'Diaye P.**, Culture Development: Some Regional Experiences, UNESCO, 1981, p. 42.
- [8] **Hopf T.**, 'Common-Sense Constructivism and Hegemony in World Politics', International Organization 67(3), 2013, pp. 317-54.
- [9] **Baldwin D.**, 'Power Analysis and World Politics: New Trends Versus Old Tendencies', World Politics 31 (2), 1979, pp. 161-94.
- [10] OECD, Higher Education to 2030 Volume 2 Globalization, OECD Publishing, 2009, Paris, 67.
- [11] The Lisbon Special European Council: Towards Europe of Innovation and Knowledge.
- [12] European Commission, 2001.
- [13] Erasmus + Program Guide, 2017, p. 30.
- [14] Erasmus Facts, Figures and Trends for 2007-2013.
- [15] The Erasmus Impact Study: Effects of Mobility On the Skills and Employability of Students and Internationalization of Higher Education Institutions, European Commission, Education and Culture, p. 114.
- [16] Comparison of Personal and Cultural Change Taking Place Between EU Erasmus Students and Turkish Erasmus Students (with The Sample of Mickievitz A., University of City Poznan, Poland), Mutlu S., Alcahan O., Erdil M., Eurasian Journal of Anthropology, 2010, p. 39.
- [17] COM (94) 314 final, Communication from the COMMISSION to the COUNCIL, Towards a New Asia strategy, 13 July 1994, p. 11.
- [18] European Commission, URL: www.ec.europa.eu/youth/success-stories/youth-in-action_en (Accessed: 14.06.2018).

Դերզյան Տաթև

ԵՎՐՈՊԱՅԻ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Բանալի բառեր՝ փափուկ ուժ, նորմատիվ ուժ, կրթություն, Եվրոպական միություն, Եվրոպայի խորհուրդ, Եվրոպականացում, ԵԲԿՏ, Էրասմուս, շարժունություն, կրեդիտ, կոմպետենցիաներ:

Սույն հոդվածի նպատակն է նորովի բացահայտել «փափուկ ուժը»՝ որպես Եվրոպայի դիրքերը միջազգային հարաբերություններում ամրապնդելու Եվրոպականացման գործիք:

Հողվածի խնդիրներն են՝ բացահայտել տարբեր ծրագրերի (Բոլոնիայի գործընթաց, Էրասմուս) ազդեցությունը եվրոպականացման գործընթացի վրա՝ ուսումնասիրելով դրանց արդյունավետությունն ու հասկանալով միտումները: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է զարգացող երկրների նկատմամբ ԵՄ-ի որդեգրած քաղաքականությամբ, այն է՝ եվրոպական կրթական ծրագրերի թվաքանակի և ֆինանսավորման աճով, ինչպես նաև կրթության արժևորմամբ՝ որպես սոցիալականացման գործիք:

Дерзян Татев

ПРИМЕНЕНИЕ «МЯГКОЙ СИЛЫ» ЕВРОПЫ С ПОМОЩЬЮ ОБРАЗОВАНИЯ

Ключевые слова: мягкая сила, нормативная сила, образование, Европейский союз, Совет Европы, европеизация, ЕПВО, Эразмус, мобильность, кредит, компетенции.

Цель этой статьи – по-новому представить «мягкую силу» в качестве инструмента европеизации с целью укрепления позиций Европы в международных отношениях. Цель исследования - определить влияние различных программ (Болонский процесс, Эразмус) на процесс европеизации, определить их эффективность и понять их тенденции. Актуальность работы обусловлена увеличением числа и финансирования европейских образовательных программ в развивающихся странах, а также позиционированием образования как инструмента социализации.

Derzyan Tatev

IMPLEMENTATION OF 'SOFT POWER' BY EUROPE THROUGH EDUCATION

Key words: soft power, normative force, education, European Union, European Council, Europeanization, EHEA, Erasmus, mobility, credit, competences.

The aim of the article is to comment on 'soft power' in a new way as an instrument of Europeanization in order to strengthen the position of Europe in the sphere of international relations. The purpose of the study is to determine the impact of various programs (Bologna process, Erasmus) on the process of Europeanization, as well as to determine their effectiveness and understand their trends. The relevance of the work is due to the increase in the number and funding of European educational programs in developing countries, as well as the positioning of education as an instrument of socialization.